Ա Ռ Ա Ր Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 17-Ի ԹԻՎ 91-Ա ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թիվ 91-Ա որոշման նախաբանում ՀՀ Շիրակի մարզի Ամասիա համայնքի ավագանու 2020 թվականի հունիսի 12-ի թիվ 31-Ա որոշման 1-ին կետին կատարված հղումը չի համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 3-րդ մասին, համաձայն որի հղումները կատարվում են միայն հիմնական ակտին կամ հիմնական ակտի մասերին: Բացի այդ, նշված հղումը չի համապատասխանում նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասին: Հաշվի առնելով վերոգրյալը, անհրաժեշտ է որոշման նախաբանում հղում կատարել ոչ թե ՀՀ Շիրակի մարզի Ամասիա համայնքի ավագանու 2020 թվականի հունիսի 12-ի թիվ 31-Ա որոշման 1-ին կետին, այլ հիմնական ակտի (ՀՀ Շիրակի մարզի Ամասիա համայնքի ավագանու 2020 թվականի հունվարի 23-ի թիվ 6-Ա որոոշում) 1-ին կետի համապատասխան դրույթին:

Կատարող՝ Շ. Շաքարյանց
07.08.2020թ.